

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 81'373.46:811.19

Հ.Ց. ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ
ԴՐԱՆՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Դիտարկվում են հայերեն գիտատեխնիկական տերմինաբանության մեջ տերմինների բազմիմաստության և համանունության դեպքերը: Բազմիմաստությունը՝ որպես բառապաշարի զարգացման օրինաչափություն, անխուսափելի է նաև տերմինաբանության մեջ: Մինչդեռ անհանձնարարելի համանունությունը կարող է տերմինների գործածության շփոթի տեղիք տալ, ուստի մասնագետների խնդիրն է ժամանակ առ ժամանակ վերանայել և հստակեցնել իրենց բնագավառների տերմինները:

Առանցքային բառեր. պոլիտեխնիկական բառարան, բազմիմաստ և համանուն տերմիններ, տերմինների շփոթություն, տերմինահամակարգերի կանոնակարգում:

Ներածություն: Տերմինները՝ որպես լեզվի բառապաշարի մի մասնաշերտ, դասակարգվում են իրենց գիտությունների դասակարգման ընդհանուր հիմունքներին, դրանց զարգացման օրինաչափություններին ու միտումներին համապատասխան: Տերմինների ամբողջությունը լեզվում կարող է լինել որպես [1]՝

1. *ընդհանուր տերմինաբանություն.* օրինակ՝ հայերեն ամբողջ տերմինաբանությունը,

2. *մասնավոր տերմինաբանություն (տերմինահամակարգ).* որևէ բնագավառի, օրինակ, մեխանիկայի, լեզվաբանության, աշխարհագրության և այլ առանձին տերմինաբանությունները:

Գիտության մեծ խմբերի՝ հասարակագիտական, բնագիտական և տեխնիկական բնագավառների տերմինները կարող են համակարգվել և կազմել հետևյալ խմբավորումները.

1) *համընդհանուր տերմինաբանություն.* բոլոր բնագավառների համար ընդհանուր տերմինների ամբողջությունը, օրինակ՝ *գիտափորձ, եղանակ, դրույթ, համակարգ, մեթոդ, վարկած, վերլուծություն* և այլն,

2) *ընդհանրական տերմինահամակարգ.* գիտության բնագավառի և արտադրության ճյուղի, օրինակ՝ մեքենագիտության և մեքենաշինության ընդհանրական տերմինահամակարգը,

3) *տերմինային միջհամակարգեր.* առանձին բնագավառների խմբավորումների համար ընդհանրություն ներկայացնող տերմինների ամբողջությունը,

օրինակ, բժշկության և կենսաբանության մեջ ճիշտ նույն նշանակություններով գործածվող (*սիրտ, թոք, որովայն* և այլ), կամ կազմախոսության և կենսամեխանիկայի մեջ (*բջիջ, մազանոթ, ձեռք, ոտք* և այլ) տերմինների ամբողջությունը,

4) *մասնավոր տերմինահամակարգեր*. յուրաքանչյուր առանձին բնագավառի տերմինաբանությունը,

5) *մանրահամակարգեր*. առանձին բնագավառի տերմինահամակարգի ենթահամակարգերը, օրինակ՝ հրթիռաշինության, մեքենաշինության տեխնոլոգիայի, նավաշինության և այլ ենթահամակարգերի տերմինները կազմում են մեքենաշինական ամբողջական տերմինահամակարգի մանրահամակարգերը:

Սակայն գիտության զարգացման այսօրվա աստիճանում գնալով դժվարանում է առանձին գիտությունների և գիտակարգերի հստակ սահմանազատումը կամ դրանք կոնկրետ մեկ խմբի կամ ենթախմբի մեջ դասակարգումը: Պայմանավորված գիտության տարբեր բնագավառների, մի կողմից՝ մասնավորեցման, մյուս կողմից՝ միավորման, ինչպես և տարբեր բնագավառների հատույթում նոր գիտակարգերի կամ բնագավառների առաջացման իրողություններով՝ այսօր գրեթե չկան առանձին անաղարտ տերմինահամակարգեր: Դա պայմանավորված է գիտության զարգացման ներկայիս ընթացքով և միտումներով: Արդի փուլում գիտությունները զարգանում են հակադրամիասնության օրենքով [2].

1. Մի կողմից՝ նկատելի է գիտությունների մասնավորեցման գործընթաց, երբ դրանք հետզհետե մասնավորվում են՝ առաջ բերելով նոր բնագավառներ և գիտակարգեր: Այսինքն՝ նույն խմբի (համասեռ) երկու և ավելի գիտությունների հատույթում ձևավորվում են ինքնուրույն գիտակարգեր, որոնցում օգտագործվում են նաև իրենց մայր գիտության տերմինները (օրինակ՝ ֆիզիկայի, մեխանիկայի և վերջինիս հիմքի վրա առաջացած մեքենագիտության համար ընդհանուր են *ուժ, արագություն, արագացում, դեֆորմացում* և այլ տերմիններ): Ուստի դժվար է նոր առաջացած բնագավառի տերմինաբանության սահմանազատումն իր մայր գիտության տերմինաբանությունից:

2. Մյուս կողմից՝ միավորվում են տարբեր խմբերի պատկանող (տարասեռ) գիտություններն իրենց ուսումնասիրության առարկաների բնույթով և մեթոդներով: Օրինակ՝ մաթեմատիկան այսօր թափանցել է լեզվաբանության, տրամաբանության մեջ, կիրառական միավորել է կենդանի և անկենդան բնությունն ուսումնասիրող գիտություններից շատերը: Եվ առաջ են եկել միանգամայն նոր հասկացություններ՝ իրենց տերմիններով:

3. Կան առանձին գիտություններ էլ, որոնք իրենց բնույթով ի սկզբանե գտնվում են տարբեր խմբերի գիտությունների հատույթում: Կենդանի և անկենդան բնությունների հետազոտության հատույթում են դեղագիտությունը, գյուղա-

տնտեսական գիտությունները, աշխարհագրությունը, բնապահպանությունը: Դրանք սերտորեն առնչվում են ինչպես բնական ու տեխնիկական, այնպես էլ հասարակական գիտություններին: Արվեստի և տեխնիկական գիտությունների հատույթում են ճարտարապետությունը, դիզայնի և գործը և այլն:

Այս փոխհատվող բնագավառները փոխադարձաբար օգտվում են միմյանց տերմինաբանությունից, և այդ է պատճառը, որ առաջ են գալիս տերմինաբանական խառը՝ փոխհատվող խմբավորումներ: Երբ տարբեր գիտությունների խաչասերմամբ կամ դրանց հատույթում առաջ են գալիս նոր հասկացություններ, անհրաժեշտաբար ստեղծվում են նաև համապատասխան նոր տերմիններ: Այդ իրողությունների արդյունքում գիտության ցանկացած տերմինահամակարգում կարող են ի հայտ գալ *տերմինային բազմիմաստություն, տերմինային համանունություն և տերմինային հոմանշություն* [3]:

Տերմիններին հատուկ այս դեպքերը տերմինագիտության մեջ միարժեքորեն չեն գնահատվում: Մերժելի է հատկապես տերմինային հոմանշությունը, որի քննությանն անդրադարձել ենք մեր նախորդ աշխատանքներից մեկում [4]: Այս աշխատանքում քննության են առնվել տերմինային բազմիմաստության և համանունության դեպքերը, որոնցից առաջինն անխուսափելի է որպես լեզվի զարգացման օրինաչափություն, իսկ երկրորդը, հատկապես ներհամակարգային համանունությունը, կարող է առաջացնել շփոթություն:

Տերմինագիտության՝ իբրև միջգիտական գիտության յուրահատկությունն այն է, որ տերմինների զարգացման օրինաչափությունները ենթակա են ոչ միայն լեզվաբանական, այլև տարբեր մասնագիտական ոլորտների քննությանը: Ուստի գիտության հարատև զարգացմամբ պայմանավորված՝ մշտապես արդիական է տերմինների զարգացման օրինաչափությունների քննությունը և լեզվաբանների, և այլ մասնագետների կողմից:

Բազմիմաստ և համանուն տերմինների՝ «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանից» [5] քաղված օրինակների համեմատության մեթոդով, որպես գիտատեխնիկական տերմինաբանության հետագա զարգացման կողմնորոշիչներ, վերլուծվում են տերմինաբանության մեջ բազմիմաստության և համանունության առաջացման դեպքերը:

Բազմիմաստ տերմիններ: Տերմինային բազմիմաստության առաջացման հիմնական պատճառը գիտության արագընթաց զարգացման արդյունքում այն բազմաբնույթ հասկացությունների առաջացումն է, որոնց լեզվական ճշգրիտ «թաղանթի» ստեղծման համար ժամանակ է պետք: Եթե դրան գումարենք նաև այն, որ հետազոտողի համար առանձնապես կարևոր չէ այդ «թաղանթը» (մասնագիտական ոլորտում՝ տերմինաբանական դաշտում, կարևորը ոչ այնքան տեր-

մինի ձևն է՝ արտահայտության պլանը, որքան նրա բովանդակությունը՝ հասկացության էությունը և սահմանումը), ապա պարզ կդառնա, թե ինչու երբեմն տերմիններն ըստ պատշաճի «չեն հասնում» իրենց հասկացությունների ետևից: Եվ հետազոտողներից շատերն իրենց ստեղծած օբյեկտն անվանելու նպատակով դիմում են լեզվում արդեն յուրացված, այսպես կոչված, «քննություն բռնած» տերմիններին՝ առաջացնելով բազմիմաստություն:

Տարբեր գիտաճյուղեր տարբեր չափերով են «օգտվում» այլ գիտաճյուղերի տերմիններից: Սա նշանակում է, որ բազմիմաստության հիմքում ընկած է մի կարևոր պայման՝ որքանով է տվյալ գիտաճյուղն իր ուսումնասիրության առարկայով և մեթոդներով առավել ընդհանրական նույն խմբի (համասեռ) և նույնիսկ տարբեր խմբերի (տարասեռ) գիտաճյուղերի համար: Օրինակ, անկենդան բնությունն ուսումնասիրող գիտաճյուղերի շարքում նման դեր ունի ֆիզիկան, որն ինքը գիտություն է բնության մասին: Քիմիան մեծ չափով հենվում է ֆիզիկայի բացահայտումների վրա: Սակայն ֆիզիկան և քիմիան իրենց հետազոտություններում հաջողությունների չեն կարող հասնել առանց մաթեմատիկայի: Ֆիզիկան, որից անշատվել է մեխանիկան՝ որպես առանձին բնագավառ, ընկած է նաև տեխնիկական շատ գիտությունների հիմքում՝ մեքենագիտություն, էլեկտրատեխնիկա, ռադիոտեխնիկա, կապի համակարգեր, հեռուստակապ, կիբեռնետիկա և այլն: Քիմիան ընկած է ոչ միայն երկրաբանության, այլև տնտեսության ճյուղերի հետ սերտորեն առնչվող մետալուրգիական, հանքաբանական, դեղագործական գիտությունների, որոշակի չափով՝ նաև կենդանի բնությունը հետազոտող կենսաբանական, գյուղատնտեսական գիտությունների հիմքում և այլն: Բնականաբար, այս բնագավառներում փոխադարձաբար օգտագործվում են տերմիններ, որոնք ձևով նույնն են, իմաստով և սահմանումներով՝ տարբեր: Եվ առաջ է գալիս տերմինային բազմիմաստություն:

Բազմիմաստության դրսևորումները տարբեր համակարգերում

1. Մաթեմատիկա

ա) արտահամակարգային

աժանցում – լզվբ., բազմահասցե – ալհ., բերված – մխ., գլան – մք. ճրտ., երկնիստ – երկբ., մատրից – ալհ.,մք.,մտ.,տպգ., ներդրում – տնտ., շոշափում – մք. և այլն:

բ) հարահամակարգային

այլասերում – ֆ.ք, այլափոխում – ֆ., անլուծելի(ություն) – ք., աններդաշնակ –ֆ., անպարբերական – ֆ., գումարային – ֆ., երկարժեք – ֆ., էափոխում– ֆ.ք և այլն:

2. Ֆիզիկա

ա) արտահամակարգային

աղավաղում – աստ., արձագանք – էլ., բազմագունություններ – կբ., բեկում – մտ., գալվանացույց – չփգ., գոլորշաչափ – օդ., գոլորշիացում – մք. և այլն

բ) հարահամակարգային

արտամղիչ – ք., ատոմական – ք., բազմաբյուրեղ – ք., երկպրիզմա – մթ., երկներդաշնակ – մթ., ընդարձակում – մխ., տատանում – մխ. և այլն:

3. Քիմիա

ա) արտահամակարգային

ապակեթելք – շն., ապակեհատիկանյութ – շն., գազապակի – շն., գազահեռացում – գղտ., գազանալիզարար – չփգ., ջերմագիր – չփգ., ռետինացում – ավտ., սոսինձ – սննդ, կշգ, փտմշ, տպգ. և այլն:

բ) հարահամակարգային

ածանցուկ – երկբ., ածխացում – երկբ., ածխաթերմիա – մտ., ակտիվարար – Ֆ., բյուրեղ – Ֆ, երկբ., գազակախույթ – Ֆ., դաբաղանյութ – դեղ., կշգ., դոնդողագոյացում – սննդ., դեղ. և այլն:

Բազմիմաստություն առաջանում է նաև այն դեպքում, երբ տերմինները թարգմանվում են՝ առանց հաշվի առնելու այլ համակարգերում արդեն եղած տերմինների առանձնահատկությունները:

Սա նշանակում է, որ չնայած տերմինաբանությունը լեզվի բառապաշարի ամենահարաշարժ մասնաշերտն է, սակայն առանձին տերմիններն ավելի դանդաղ են կյանքի կոչվում, քան սովորական բառերը: Եվ տարբեր համակարգերում առկա տերմինները «ստիպված են լինում ստանձնելու» մի քանի պաշտոն, հանդես գալու մի քանի հասկացությունների նշանակություններով: Այստեղ դեր են խաղում, առաջին հերթին, այն բավականաչափ խիստ պահանջները, որոնք ներկայացվում են տերմինին, տերմինակերտմանն ու առհասարակ տերմինաշինությանը [1]:

Բազմիմաստության հիմնական դրսևորումները արտահամակարգային (տարասեռ գիտաճյուղերի) և հարահամակարգային (համասեռ գիտաճյուղերի), հազվադեպ նաև՝ ներհամակարգային (նույն գիտաճյուղի) պլաններում են: Բայց այսօր՝ գիտությունների փոխներթափանցմամբ և փոխհատմամբ զարգացման պայմաններում, հաճախ դժվար է սահմանազատել արտահամակարգային և հարահամակարգային բազմիմաստության դեպքերը:

Բազմիմաստությունը պայմանավորված է տերմինների առաջացման արտալեզվական և ներլեզվական գործոններով: Օրինակ, մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանության մեջ բազմիմաստության առաջացման արտա-

լեզվական գործոն էր մեքենագիտության առաջացումը մեխանիկա գիտության հիմքով, երբ որպես հետևանք մեքենագիտությունը ժառանգեց առանցքային տերմինների նշանակալից քանակ մեխանիկայից, որն էլ, իր հերթին, ժառանգել էր ֆիզիկայից: Դրանք առնչվում են հատկապես ստատիկայի, կինեմատիկայի, դինամիկայի բաժիններին [6]:

Մեքենագիտական և մեքենաշինական տերմինների մի զգալի մասը զուգահեռաբար գործածվում է շինարարական, մի մասը՝ օդագնացության ու նավագնացության, մյուս մասը՝ երկրաբանության, տիեզերագիտության, որոշ մասը՝ տեքստիլագործության և այլ գիտակարգերում: Բոլոր այն բնագավառներում, որտեղ թափանցում են մեքենաներն ու մեխանիզմները, մեքենաշինական սարքերն ու սարքավորումները և նրանց հետ կապված գործընթացները, կարող են տարբեր հասկացությունների համար գործածվել նույն տերմինները: Մեքենագիտական և մեքենաշինական տերմինների նման գործածությունն առաջ է բերում արտահամակարգային և հարահամակարգային բազմիմաստություն:

Արտահամակարգային և հարահամակարգային բազմիմաստությունը մեքենագիտական և մեքենաշինական տերմինաբանության մեջ

1. Մեքենագիտություն

անիվ – ավտ, նվզ, հղր, գղտ., արմունկ – ավտ, սն, հղր., բազուկ – կզմխ., աշխ., գամակցում – երկթ, շն, փտմշ, չփզ, օդգ., ենթահարմոնիկ – ռդ., փոխանցում – կպ., ռդ., հնք., հղր., սեղմում – ռդ., աշխ., աստ., տատանումներ – էլ., ռդ., կոնապտտական – աստ. և այլն:

2. Մեքենաշինություն

Գալար – տքս. էլ., գչիր – հնք., բժշկ., սղոց – փտմշ., հորատիչ – հնք., սողան–ռզմ., մամլիչ – փտմշ., դարձափոխիչ – էլ., կտրիչ – գղտ., շնիկ – էլ. և այլն:

Պայմանավորված տեխնիկայի նորագույն զարգացումներով՝ մեքենագիտության մեջ առաջացել են նոր բնագավառներ ու բաժիններ, որոնցից է, օրինակ, մեխատրոնիկան, որ հենված է էլեկտրոնիկայի և ավտոմատ կառավարման տեսությունների վրա և ներառում է վերջիններիս, ինչպես և կազմախոսության տերմինների համապատասխան շերտերը: Սրանով պայմանավորված՝ առաջացել են բազմիմաստ տերմինային փնջեր՝ կապված, օրինակ, մեխատրոնիկայի զարգացման մի դրսևորումը ներկայացնող քայլող, սողացող, խոսող, հաշվող և մարդկային մտավոր ու ֆիզիկական այլ գործողություններ ու շարժումներ ընդօրինակող-վերարտադրող ռոբոտ-մեքենաների հետ [7]:

Հարահամակարգային բազմիմաստությունը մեքենաշինության մեջ

| ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ | ՄԵՔԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ | ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ |
|-------------------------------------|-------------------------------------|-------------------------------------|
| բարձակ , հակակշիռ | բարձակ , ֆերմայի | բարձակ , խարսխային |
| բլոկ , գայլիկոնիչ | բլոկ , բեռնավորման | բլոկ , աղյուսե |
| հեծան , երկտավրանի | հեծան , կոշտության | հեծան , կորագիծ |
| մակերևույթ , կրող | մակերևույթ , սահքի | մակերևույթ , սոսնձման |
| մեխանիզմ , մղակող | մեխանիզմ , դեֆորմացնող | մեխանիզմ , նույնաժամացնող |
| պտուտակ , բազմընթաց | պտուտակ , կինեմատիկական | պտուտակ , անփոփոխ քայլով |
| փորձարկում , հղկելիության | փորձարկում , հոգնածության | փորձարկում , կարծրության |
| օղակ , սղոցաշղթայի | օղակ , սկզբնական | օղակ , խողովակաշարի |

Մեքենագիտությունն ունի տերմինների ընդհանուր շերտ մաթեմատիկայի հետ, քանի որ հենվում է նաև նրա ուսումնասիրության մեթոդների վրա: Այդ շերտը կազմում է միջգիտական ընդհանուր և բազմիմաստ տերմինների շերտը ֆիզիկայում, մեխանիկայում, մաթեմատիկայում և մեքենագիտության մեջ:

Հարահամակարգային բազմիմաստությունը մեքենագիտության մեջ

| ՄԵՔԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ | ՖԻԶԻԿԱ | ՄԱԹԵՄԱՏԻԿԱ |
|---------------------------------|----------------------------------|----------------------------------|
| անկյուն , պտտման | անկյուն , խտորումների | անկյուն , ներքին |
| բանաձև , կառուցվածքային | բանաձև , չափայնության | բանաձև , հանրահաշվական |
| գիծ , ազդեցության | գիծ , ինտերֆերենցիոն | գիծ , տարամիտման |
| գրադիենտ , ճիգերի | գրադիենտ , էնթրոպիայի | գրադիենտ , ֆունկցիայի |
| գրաֆիկ , հետագծերի | գրաֆիկ , ցրման | գրաֆիկ , սխալների |
| գումարում, վեկտորական | գումարում, վեկտորական | գումարում, վեկտորական |
| դեկրեմենտ , տատանումների | դեկրեմենտ , ամպլիտուդի | դեկրեմենտ , գծային |
| տիրույթ , մրրկային | տիրույթ , մեծ էներգիաների | տիրույթ , մեծ թվերի |

Արտալեզվական գործոններով պայմանավորված՝ տերմինային բազմիմաստությունն առանձնապես կարող է ծավալվել մեքենաշինական տերմինահամակարգում: Մեքենաշինության տեսական հիմքը մեքենագիտությունն է, իսկ մեքենաշինությունը տնտեսության հիմնական ճյուղերից մեկն է (էներգետիկայի հետ միասին), որով մեծապես պայմանավորվում է մյուս ճյուղերի գործունեությունն ու առաջընթացը: Գտնվելով արդյունաբերության և տնտեսության այլ ճյուղերի տերմինաբանության խաչմերուկում՝ մեքենաշինական տերմինահամակարգն անընդհատ կարող է համայնվել գիտության և հատկապես արդյունաբերության այլ ճյու-

ղերի տերմիններով՝ միաժամանակ համալրելով այդ ճյուղերի տերմինահամակարգերը և հիմք տալով միջճյուղային բազմիմաստ տերմինների առաջացման:

Դրա ցայտուն օրինակներից են հաստոցաշինությունը և հաստոցների կիրառությունը տարբեր բնագավառներում [1]:

Հարահամակարգային բազմիմաստությունը հաստոցների կիրառության ոլորտներում

| մեկադամշակում | փայտամշակում | զանազան |
|--------------------------|---------------------|----------------------------------|
| ✓ ավտոմատ | ակոսահան | <u>հանքաբան.</u> |
| ✓ թվածրագրային | դանակասղոցավոր | հորատման |
| ✓ համապիտանի | եզրառանդիչ | հորատասրման |
| ✓ ձեռքի | եզրաֆուգանիչ | <u>շինարարական</u> |
| <u>խառատային</u> | խյուսափայտամշակման | սղոցահաստոց |
| գայլիկոնման | ծլեպահաստոց | քարամշակման |
| <u>շաղափային</u> | կեղևահան | <u>մետալուրգ.</u> |
| ներտաշիչ | հղկատաշիչ | աղեղային |
| <u>ատամնամշակման</u> | մատնեքահան | եռակցման |
| պարուրակամշակման | մեխահատ | <u>անդարդյունաբեր.</u> |
| <u>ֆրեզային</u> | նրբատախտակի ռանդման | կափարիչափակման |
| բարձակային | չափահատ | <u>տպագրական</u> |
| <u>հղկման</u> | ռուստավորման | էջկապ |
| <u>ռանդիչ</u> | սունձապատման | օֆսեթային |
| <u>թործիչ</u> | և այլն | <u>տեքստիլագործ.</u> |
| <u>կտորահատիչ</u> և այլն | | մանածագործական բազմամաքոք և այլն |

Ահա այս բազմաբարդ փոխհատումների «խաչմերուկներում» առաջանում են ոչ միայն տարբեր գիտաճյուղերի համար համընդհանրական, ընդհանրական և միջգիտական հասկացություններ ու տերմիններ, այլև բազմիմաստ տերմիններ, երբ բազմիմաստությունն ապահովվում է կամ յուրաքանչյուր առանձին գիտաճյուղում տվյալ տերմինին այդ գիտաճյուղի հասկացության սահմանումը վերագրելով (տերմինի վերափմաստավորում), կամ տվյալ տերմինի «մուտքը» այլ գիտաճյուղ ապահովելով վերջինիս բնորոշ որևէ բաղադրիչ-տերմին բաղադրելով (տերմինային կաղապարի ստեղծում): Օրինակ՝ *այտ, գլուխ, դաստակ, թև, իրան ոտք* և կազմախոսական այլ տերմինների վերափմաստավորումը մեքենագիտության մեջ կամ «մեքենա» տերմինի կաղապարումները ամենաբազմազան բնագավառներում, որոնցով «մեքենան» դառնում է տերմին նաև այդ

բնագավառների համար, օրինակ՝ *եռակալման մ.* (մտ.), *անալոգային մ.* (ակի), *անհամաժամ մ.* (էլ.), *աղբահան մ.* (սն.), *անհարված թրթռական մ.* (մք.), *ծալքանշման մ.* (տպգ.), *զրահամեքենա* (ոզմ.), *բամբակամանիչ մ.* (տքս.), *հորատամեքենա* (հնք. երկբ.) և այլն:

Համանուն տերմիններ: Տերմինաբանության մեջ դժվար է սահմանազատել համանունությունը բազմիմաստությունից, քանի որ ժամանակակից հայերենում տերմինային համանունների առաջացման կարևոր գործոններից մեկը բառի բազմիմաստությունն է [3,8]: Բառիմաստի փոփոխության հետ կապված մյուս գործոնները, որոնք ընդհանուր առմամբ հատուկ են բառերի փոխաբերացմանը, նույնպես կարող են առաջացնել համանունություն, սակայն դրանք առանձնապես դեր չեն խաղում տերմինային համանունության առաջացման գործում:

Ըստ ծագման աղբյուրների՝ համանուն տերմիններ կարող են առաջանալ.

ա) *Համագործածական շերտի բառերի և տերմինային իմաստների համընկնումով.*

ագռավուկ - մք., **ակ** - կենս., բժշկ., հնք., մտ., ջտ., գղտ., **աղաթթու** - ք., **աղուր** - գղտ., երկբ., աշխ., բսբ., **աղմուկ** - ֆ., ող., **այր** - կզմխ., մք., **անդամ** - մթ., կզմխ., քղք., լզվբ., **անլուծելի** - մթ., ք., **անծռելի** - մխ., **անկում** - հղր., օղ., **անհայր** - մթ., **աստիճան** - չփգ., ող., հնք., էլ. նվգն., **ավազան** - մտ., եկեղ., **բլետ** - էլ., աշխ., **գումարում** - մթ., քղք., **դող** - հիվ, ավտ. և այլն.

բ) *արհեստների և կենցաղային հասկացություններ նշանակող տերմինային և բառային իմաստների համընկնումով.*

ականոց - ոզմ., **ակոս** - մք., **աղաց** - թղթ., սննդ., **աշխատանք** - տնտ., ֆ., մխ., մք., **անուր** - մք., շն., **առու** - մք., **ասեղ** - մք., **աստառ** - տքս., **արոր** - կենդ., **գունդ** - մթ., ոզմ., **զամբյուղ** - մք., **լաթ** - մք., **լար** - մք., երժշտ. և այլն.

գ) *գիտության մի բնագավառի տերմինների՝ մյուս բնագավառներում գործածությամբ, որն էլ հենց տերմինային բազմիմաստությամբ առաջացած համանունությունն է.*

աղեղ (ոզմ.) - երժշտ., մթ., տքս., **անկյուն** (մթ.)-գեող., **անհողակապ** (լզվբ.) - մխ., շն., **աչք** (կենս.) - բժշկ., գղտ., շն., **ասույթ** (գրկ.)- լզվբ., մթ., **բազուկ** (բսբ.)- կզմխ., աշխ., մխ., մք., **դաբաղ** (բժշկ.)- կզգ., ք., **կռունկ** (կենդ.)- մք., **հակինթ** (բսբ.)- հնք., **ճակատ** (կզմխ.)- ոզմ., **ոտք** (կզմխ.)- մք., ոզմ., տղչփ., **ջոկ** (կենդ.)- ոզմ. և այլն.

դ) *բնիկ-փոխառյալ և փոխառյալ-փոխառյալ տերմինների համընկնումով.*

անկեր - մք., շն., ավտ., **բլենդ** - երկբ., ֆ., մք., կենդ., **բլոկ** - քղք., մք., շն., երկթ., **բոստոն** - տքս., երժշտ., **բոր** - ք., բժշկ., բժտ., **գամմա** - երաժշտ., ֆ., չփգ., **գրաֆիկ** - մթ., արվեստ., **դեպրեսիա** - տնտ., հոգեբ., բժշկ., **դիզել** - մք., **զոնդ** -

բժտ., հնք., օդ., տիեզ., **էլեկտրոն** - ֆ., ք., կետ-մթ. կենդ., **տիպան** - բսբ., ք., **ֆերմա** - գղտ., մխ., շն. և այլն.

ե) հատուկ անուններից իմաստի մասնավորեցումով տերմինների առաջացմամբ.

Ամպեր/**ամպեր**-էլ., Բարել/**բարել**-չփգ., Բոր/**բոր**-ք., Դիզել/**դիզել**-մք., Կուլոն/**կուլոն**-էլ., չփգ., Նյուտոն/**նյուտոն**-ֆ., չփգ., Ջոուլ/**ջոուլ**-էլ., չփգ., Վերեր/**վերեր**-էլ., չփգ., Ուարդ/**վարդ**-ֆ., չփգ., Օհմ/**օհմ**-էլ., չփգ. և այլն:

Համանունության առաջացման բազմազան պատճառներին որոշ ուսումնասիրողներ հավելում են նաև իմաստային պատճենումները՝ որպես փոխառության մի դրսևորում [9], որոնք, ըստ մեզ [10], համանունության առաջացման արտաքին գործոնի՝ թարգմանության արդյունք են, որն իրականանում է լեզվի զարգացման ներքին ուղիով՝ ներքին հնարավորությունների և միջոցների գործադրմամբ: Ի տարբերություն բառապաշարի համագործածական շերտի բառային համանունների՝ տերմինային համանունությունն առաջանում է հիմնականում արտաքին գործոնների հետևանքով, երբ կատարվում են փոխառություններ, կամ եղած տերմիններով թարգմանվում, կամ անվանվում են նոր հասկացություններ: Օրինակ՝ մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանության մեջ նկատելի են համանունության հետևյալ դրսևորումները.

Արտահամակարգային համանունություն տարբեր բնագավառներում

ապարատ – ընդ., աստիճան – ընդ., ավտոմատ – ընդ., բազա – ընդ., գագաթ – ընդ., գոգ – ընդ., գործակից – ընդ., գոտի – ընդ., թմբուկ – ընդ., լարում – ընդ., խարիսխ – ընդ., մարտկոց – ընդ. և այլն:

Ներհամակարգային համանունություն

ա) տարբեր իմաստների արտահայտում նույն տերմինով.

| | | | |
|----------------|--------------|------------|------------------|
| Бородок | – անցքահատ | отделитель | – զատիչ |
| дыропробойник | – անցքահատ | сеператор | – զատիչ |
| шляпа | – գլխիկ | раздача | – ընդարձակում |
| головка | – գլխիկ | расширение | – ընդարձակում |
| пазуха | – գոգ | инструмент | – գործիք |
| впадина | – գոգ | снаряд | – գործիք |
| выдавливание | – արտաճզմում | остановка | – կանգառք |
| редукцирование | – արտաճզմում | выстой | – կանգառք |
| резец | – կտրիչ | сальник | – դարձյակ |
| рубилка | – կտրիչ | цапфа | – դարձյակ և այլն |

բ) *անսպույգ կամ անհաջող թարգմանությամբ առաջացած համանունություն.*

Жесткость – կոշտություն, прочность – կարծրություն, պնդություն, կոշտություն, твердость – ամրություն, դիմացկունություն, պնդություն, колено – ծունկ, արմունկ, ոլորան, отвод – արտաուղղում, ճյուղ // արմունկ, очко – ակ, անցք, отверстие – անցք, ծակ, բացվածք և այլն:

գ) *Ներհամակարգային համանունությունը* տերմինաբանության մեջ կարող է պայմանավորված լինել նաև համակարգում տերմինային այնպիսի ընդհանուր դաշտի առկայությամբ, երբ տերմիններն ընդհանուր են իրենց հասկացական-իմաստային առումով, սակայն տարբեր են գործառական առանձնահատկություններով, օրինակ՝ մեքենագիտական-մեքենաշինական ենթահամակարգերում գործառական ինչ-ինչ առանձնահատկություններ են դրսևորում *առանցք (տոնի), ճկում, շարժաբեր, շուռվիկ* և այլ տերմիններ:

Թեև տերմինային համանունությունն ավելի հաճախ առաջ է գալիս տերմինների գործառական իմաստների փոփոխության արդյունքում, սակայն հատկապես նույն համակարգում դրանց գործածությունը կարող է շփոթությունների տեղիք տալ: Հետևապես, տերմինային համանունությունը՝ որպես անցանկալի, անհանձնարարելի իրողություն, պետք է դառնա տերմինների կանոնակարգման առարկա [1]:

Եզրակացություն: Պայմանավորված գիտության սրընթաց զարգացմամբ՝ տերմինաշինության գործընթացը լեզվում կարող է առժամանակ հետ մնալ հասկացությունների հարափոփոխ առաջընթացից, և առաջանում են տարբեր տերմինահամակարգերում գործառվող բազմիմաստ և համանուն տերմիններ:

Որպես լեզվի զարգացման օրինաչափություն և հետևանք՝ բազմիմաստությունը տերմինաբանության մեջ շփոթություն չի առաջացնում, եթե հստակեցված են նույն տերմինով արտահայտվող տարբեր հասկացությունների իմաստներն ու սահմանումները գիտության տարբեր բնագավառներում:

Այլ է խնդիրը տերմինային համանունության դեպքում. շփոթություն կարող են առաջացնել հատկապես ներհամակարգային համանուն տերմինները, և առաջ է գալիս դրանք վերանայելու անհրաժեշտություն: Այս առումով մասնագետները ժամանակ առ ժամանակ պետք է ձեռնամուխ լինեն իրենց բնագավառների տերմինների վերանայմանն ու ճշտգրտմանը՝ գիտական գիտելիքի ճանաչողության հստակությունը, ինչու չէ, նաև ուսուցման արդյունավետությունն ապահովելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Պետրոսյան Հ.Յ.**, Տերմինագիտության հիմունքներ. Դասագիրք.-Ե., 2010.-303 էջ:
2. **Մարության Ո.Ջ., Պետրոսյան Հ.Յ.**, Ինժեներական գործի պատմություն. Մաս 1. Հնադար. Միջնադար. Նոր շրջան, Ու.ձեռն., Ե., 2021:
3. **Շալունց Ռ.**, Տերմինային հոմանշություն և բազմիմաստություն. Լեզվի և ոճի հարցեր, հ. 8, Ե., 1984:
4. **Պետրոսյան Հ.Յ.**, Տերմինների հոմանշության դրսևորումները գիտատեխնիկական բառարանագրության մեջ, ՀԱՊՀ Լրաբեր.Գիտական հոդվածների ժողովածու, Մաս 2, Ե., 2022, էջ 675-684:
5. **Հացագործյան Ջ. և ուրիշ.**, Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան, Ե., 1988:
6. **Պետրոսյան Հ.Յ.**, Հայերեն մեքենագիտական (մեխանիկայի) տերմինաբանության ձևավորումը, արդի վիճակը և զարգացման հեռանկարները // Լրաբեր ՀՃԱ, Հ.2, համար 3, Ե., 2005, էջ
7. **Սարգսյան Յու. և ուրիշ.**, Մեխանիզմների և մեքենաների տեսություն. անգլերեն-հայերեն-ռուսերեն տերմինարան, Ե., 2009:
8. **Ասլանյան Ս.**, Բառի տերմինացման մի քանի հարցեր հայերենում//ԼՀԳ, հ. 2, Ե., 1986:
9. **Հեքեքյան Ն.**, Պատճենումը որպես հայերեն տեխնիկական տերմինաբանության համալրման միջոց, Թեկն. ատեն., Ե., 1998:
10. **Պետրոսյան Հ.Յ.**, Հայերեն մեքենագիտական և մեքենաշինական տերմինների իմաստաբանական-կառուցվածքային և գործառական վերլուծություն. Թեկն. ատեն., Ե., 2007:

А.Ц. ПЕТРОСЯН

ПРОЯВЛЕНИЕ ПОЛИСЕМИИ И ОМОНИМИИ ТЕРМИНОВ В АРМЯНСКОЙ НАУЧНО-ТЕХНИЧЕСКОЙ ЛЕКСИКОГРАФИИ

Рассмотрены случаи полисемии и омонимии терминов в армянской научно-технической лексикографии. Полисемия, как закономерность развития лексики, неизбежна также в терминологии. Между тем нереконструируемая омонимия может внести путаницу при употреблении терминов, поскольку задачей специалистов является то, чтобы время от времени пересматривать и уточнять термины, употребляемые в их сфере.

Ключевые слова: политехнический словарь, многозначные и омонимичные термины, путаница терминов, упорядочение системы терминов.

H.Ts. PETROSYAN

**MANIFESTATIONS OF POLYSEMY AND HOMONYMY OF TERMS IN
THE ARMENIAN SCIENTIFIC AND TECHNICAL LEXICOGRAPHY**

The cases of the term polysemy and homonymy in the Armenian scientific and technical terminology are considered. Polysemy, being a regularity of the word stock development, is unavoidable in terminology, too. While unreasonable homonymy can create a confusion when using terms, it is necessary that specialists sometimes revise and clarify the terms used in their areas of research.

Keywords: polytechnic dictionary, polysemic and homonymic terms, confusion in terms, regulation of term systems.

ՀՏԴ 81'276.6: 811.111:004

Հ.Ս. ՂԱԶՈՅԱՆ

**ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՆԳԼԵՐԵՆ ՏԵՐՄԻՆՆԵՐՈՒՄ
ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ**

Քննվում են հաշվողական տեխնիկայի ոլորտում փոխաբերականացման արդյունքում տերմին դարձած միավորները: Անգլերենի տերմինակազմության մեջ կարևոր դեր ունի փոխաբերականացումը: Գիտական հասկացություն նշանակելու համար փոխաբերականացման գործընթացը սկսվում է լեզվում համագործածական բառի ընտրությամբ: Հաշվողական տեխնիկայի ոլորտում անընդհատ նոր զարգացումներ են արձանագրվում: Այս պարագայում անհրաժեշտ է կատարել փոխաբերականացման արդյունքում տերմին դարձած միավորների քննություն:

Առանցքային բառեր. փոխաբերականացում, տերմին, գիտական լեզու, հասկացություն, աղբյուր տիրույթ, թիրախ տիրույթ:

Ներածություն: Գիտական լեզվում փոխաբերականացումն իմաստաբանական գործընթաց է, որը հիմնված է արտալեզվական միջավայրի երևույթների վրա, ինչպես նաև պայմանավորված է ներլեզվական հարաբերություններով, այն կապերով, որոնք գոյություն ունեն հենց լեզվի բառիմաստային համակարգում:

Փոխաբերականացման գործընթացն սկսվում է տերմինը համագործածական լեզվում առկա բառից տարանջատելուց [1], որին հաջորդում է համագործածական լեզվում համապատասխան բառ փնտրող մասնագետի մտավոր գործունեությունը: Բառը տերմինաբանական դաշտում կորցնում է իր համագործածական բառապաշարային նշանակությունը և ձեռք բերում համապատասխան գիտական հասկացության նշանակությունը: Հայ լեզվաբանության մեջ այս երևույթն անվանում են բառիմաստի տերմինացում [2]: Անգլերենում հաշվողա-